


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
ճարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
ճարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիմ: Եկու թիւ ա-
ռաջ հրահարակուած թերքը 40 Սանդիմ:
Զհրահարակուած գրութիւնը եւ չտուի:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

Երուսաղէմէն կը գրեն.

«Երկու ամիսէ ի վեր քաղաքիս բեր-
դերէն դուրս Ս. Յակոբեանց Միաբա-
նութեան պատկանած մէկ գետնին վը-
րայ 17 խանութներ շինուելու վրայ են:
Օրը 100 գործաւորներ կաշկատին. շի-
նութեան վրայ կը հսկեն վանքին մա-
տակարար Ղևոնդ և ուրիշ երեք վար-
դապետներ »:

— Իբրև ճշմարիտ հովիւ քաջ, ամեն
տարի 'ի նպաստ Ազգային Հիւանդա-
նոցի պատուարելոց ինքնաբերաբար 50-
60 ոսկի հանգանակելով՝ զայն հիւան-
դանոցի հոգաբարձութեան յանձնող Գում-
դարու Տ. Գարրիէլեան Տ. Խաչատուր
Աւագ քահանան 70 տարեկան հասակին
մէջ անցեալ հինգշաբթի վախճաններ եւ
մարմինը Պալըգլըի գերեզմանատունը
ամփոփուեր է:

Պատրիարք, Եպիսկոպոսք, վարդա-
պետք և Քահանայք, ինչպէս նաև Ժո-
ղովրդեան ստուար բաղմութիւն մը յու-

ղարկաւորութեան հանդէսին ներկայ
գտնուեր են:

— Ի յարգանս հանգուցեալ Նուպար
բաշայի, Ազգ. քանդակի թաղապետա-
կան ժողովը որոշած է որ միջազգային
դատարանին գտնուած փողոցը՝ ասկէ
ետքը «Նուպար փողոց» անունը կրէ:

— «Բաղմովէպ» իր Փետրվարի թը-
ւով կ'աւետէ մեզի թէ, չարեյիչատակ
Նուպար բաշա՝ Մեկենաս եղբի է Հ. Ա.
լիշանի «Սիսուան» անուն երկին գաղիե-
րէնի թարգմանուած տպագրութեանը,
'ի վենետիկ Ս. Ղազարու վանքին տպա-
րանէն, 540 երեսներէ բաղկացած հա-
տորի մը մէջ:

— Ամերիկայէն կը գրեն թէ՝ սովա-
տանջ Զէյթունի օգնութիւն հասցնելու
խոստամբ բացուած հանգանակութեան
արդիւնքը՝ փոխանակ իր նպատակին գոր-
ծածելու, ըստ օրինակի նազարբէկի՝ դա-
ցաի մը մէջ դրուեր պահուեր է. ան-
շուշտ քաջարի Զէյթունցիները անօթի
ապրիլ վարժեցնել տալու համար:
Կեցցէ՛ ազգասիրութիւն ? . . .

— Պարսկահայ Մ. Տ. Յակոբեան՝ 500 անգլիական ոսկի կտակեր է մի քանի աղգային հաստատութեանց :

— Շուշեցի Թ. Թամիրեֆնայ ալ 10,000 լուբլի նուիրած է Դաւրէթի Արամեան կրթարանին :

— Ռուսահայ թերթերէն կիմանանք որ, թէև Պ. Մանթաշեանց իր նախա-
յին գործերը անգլիական ընկերութեան մը ծախսեր է, բայց ինքը կը մնայ դար-
ձեալ գործոյն իբր վարիչը և դումարին մէջ ալ մասնակցութիւն ունի :

ՏԵՂԱԿԱՆ

Պարահանդէսի կարգադիր մասնա-
խմբին կողմէ խմբագրութեանս շրջաւոր
մէկ գրութենէն կը տեղեկանանք թէ,
վարժարանի չինութենէն միմայն քե-
րէսա՝ ճիւղն պահանջն է եղեր 2334 ֆր.
80 սանդիմ արծաթ, 546 ֆ. 54 սնդ-
ալ ոսկեգրամ. 7 ֆր. 40 սանդիմ ալ բո-
լիցաին բոթթէսթօն ծախք է եղեր
նոթարիոսին ասկէց զատուրիչ մէկ քանի
անձնաւորութիւնք ալ առնելիք ունին ե
ղեր չինութենէն մնացած : Նոյն գրու-
թեան մէջ կը հարցուի նաև թէ՛ եթէ
բոլիցաին բոթթէսթօ ըլլալէն ի վեր ըստ
օրինի հարիւրին 10 տոկոսն ալ պահան-
ջուի, ծայր : ուր պիտի երթայ :

Վերոյիշեալ քերէստէճիւն պարտ-
քին թերահոշիւ վճարուեր է առ այժմ
պարահանդէսի հասոյթէն 625 ֆրանք
արծաթ :

— Գոհութեամբ լսեցինք թէ՛ Ը.
Թերցասիրաց ընկերութիւնը մօտերս
անձնուրաբար ներկայացում մը պիտի
տայ ՚ի նպատ Տիար Յ. Չաքըրեանի, որ
այս միջոցիս անկողնոյ կը ծառայէ նիւ-
թալան ամեն միջոցներէ դրեթէ զուրկ :
Քաջայոյս եմք թէ հայ ժողովուրդը ան-
տարբեր չպիտի մնայ ու չպիտի թողու
որ այս անկեղծ աղգասէրը անոք ու ան-
օգնական հեծէ հիւանդութեան անկող-
նոյն մէջ :

Երբ Ը. Թերցասիրացի երիտասարդք
լաւ ներկայացում մը տալու համար փոր-
ձերով պիտի զբաղին, տոմսակները սպա-
ռելու հոգն ալ մէկ քանի աղգասէրներ
իրենց վրայ առնելու են որ յաջողու-
թիւնը կատարելապէս ապահովուի :
Կը սպասենք :

Տեղւոյս Ընթերցասիրաց ընկերու-
թեան Ընդհ. Ժողովը Բ. անգամ ՚ի նիստ
կը հրաւիրուի վաղը Սիսակեան վարժա-
րանին մէջ : Այս անգամ եթէ դա՛նալ
մեծամասնութիւնը բացակայ գտնուի,
ներկայից թիւը օրինաւոր համարուե-
լով ատենը պիտի բացուի և օրակար-
դի խնդիրները պիտի կարգադրուին,
որոց դէմ բացակայք իրաւունք չպիտի
ունենան ՚ի վերջոյ բողոքելու :

ՀՅՐԳՈՒՄ

Գաղթական չորս ընտանիքներու ստո-
րագրութեամբ նամակ մը զրկուած է խմ-
բագրութեանս, որոնք Պատուելի Ամիրսան-
եանցի մասին «Իրաւունք» խմբագրութեան
տրուած սխալ փեղեկութեանց դէմ կը բո-
ղոքեն և կը յայտարարեն թէ, «Իրենք որ
երկու տարիներէ ՚ի վեր Պատուելիին հաշ-
ւոյն ձեռագործներ կը պատրաստեն, երբեք
չեն շահագործուած, ընդհակառակը լաւ կը
վարձատրուին և անով ընտանիքին կապրեց-
նեն. թէ այդ զրպարտութիւնը յերկրողնե-
րը անոնք են, որ իրենց յանձնուած ձեռա-
գործները լաւ չի պատրաստելնուն և մանա-
ւանդ հաւատարմաբար չաշխատելնուն համար
այլ ևս իրաւամբ մերժուած են Պատուելիին
և կը յաւելուն թէ՛ անոք որ ալ ըլլար Պատ-
ուելիին տեղը, անպատճառ ասանկ պիտի վար-
ուեր հանդէպ կարգ մը անհաւատարիմ եւ
անճոռնի կերպով գործ բանող գործաւորու-
հիւներու, որոնք իրենց առնելիք վարձէն ա-
ւելի արժէք ունեցող գործերը կ'աւրեն կ'աւ-
րըշտկեն, յանձնուած մեծաքանակը ու կ'ապ-

տանները ջղակտուր կը հանեն կամ . . . կաներևութացնեն եղեր :

Նամակագիրը խօսքերնին կը վերջացնեն, յորդորելով իրենց արհեստակցութիւնները, որ փոխանակ զրպարտելու՝ մաքուր և հաւատարմաբար աշխատին, առանց որոյ անշուշտ տեղ մը գործ չին գտներ ու կը մերժուին, նոյն իսկ եթէ «Իրաւունք»-ի խմբագրութիւնը եղած ըլլայ իրենց գործ յանձնողը :

ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

Ամեն անգամ որ սուրհանգակը մեզի կը բերէ Բազմապէս մը, Հանդես Անւտօրեայ մը և կամ ուրիշ նոր հրատարակութիւն մը Միւթարեան կրկին միաբանութիւններէն, անոնց մէջ կը գտնենք յարատե, համբերատար աշխատութեան մը և համեարաշէ գործակցութեան մը նոր արդասիքը :

Արօնական նեղ ըմբռնումներէ և իմաստակ շոյիւնութենէ զերծ ամեն հայ անշուշտ մեզի հետ հիացումով և յարգանքով կը դիտէ Միւթարեաններու գործաւոր գործունէութիւնը, որոնք օգտուելով իրենց միջավայրի յառաջդիմութեան հոսանքէն, օրէ օր աւելի առաջ կը տանին իրենց սկսած գործն : Երկու հոյակապ դէմքեր, Հայր Արիշան Վենետիկի մէջ և Հայր Այտնեան Վիեննայի Միաբանութեան գլուխը, իրենց Հ. Սարգիսեաններով և Հ. Տոշեաններովը, ոչ միայն մեր աշգային մատենագրութիւնը կը ճոխացնեն իրենց աշխատասիրած երկերովը, այլ եւ տարներու առջև իսկ բարձր կը պահեն հայ մտքի մակարդակը :

Միւթարեաններու այս անգուլ գործունէութեան հանդէպ որչափ կը շեշտուի մեր մայր վանքերու խեղճութիւնն ու անգործութիւնը :

Իրաւ է, Էջմիածին վերջին տարիներս խելացի ճամբու մը մէջ մտաւ, պարբերաբար իր մէջէն երիտասարդ արեղանքը զըրկելով Եւրոպա, բարձրագոյն ուսում ստանալու համար, և անոնցմէ մէկ բանին արդէն

համբաւ մը չինած են իրենց օգտակար հրատարակութիւններովը, բայց եղածը այնչափ բիշ է, այնչափ փոքր, որ անշմարելի կը դառնայ, և երբ մանաւանդ պարբերաբար մէջ տեղ կեցին Ռուսոյի արքայական ինդիւստրի, եղածն ալ կը մոցուի :

Հապա Երուսաղէմը . ան իր յաւիտենական բունը կը խորգայ . կարծես Զակարեան միաբանութեան տէրը եղած ըլլար միմիայն պահպանութիւն ընել սուրբ տեղերու վրայ, որպէս զի կանթեղի մը շղթան չի յափշտակուի և կամ թիղ մը հող չի պակսի : Մեր Երուսաղէմի Միաբանութիւնը պէտք է գիտնայ որ, ազգին մաղիւ չափ օգուտ չունի օտար վեհապետի մը հիացումը, հին կտաւի մը կամ ադամանդակու չաթալ-թագի մը վրայ, իրենք պարտաւոր են ազգին տալու բան մը, որ սակայն տարբեր ըլլայ . . . պարսէ :

Գալով Արմաշին, է՛հ, գպրեվանքին ըսելիք չունինք . նա իր դերը կը կատարէ . ամեն տարի ազգին կուտայ մանրիկ վարդապետներ, որոնք լաւ դաստիարակուած ըլլալու համբաւն ալ ունին : Շիտակը խօսելով, մինչև հիմա մեր տեսած գպրեվանքի վարդապետներն բացասական գաղափար կազմել տուած են մեզի, երանի թէ սխալած ըլլայինք :

Աւելորդ է խօսիլ փոքր վանքերուն վերայ . երբ կեդրոնները ոչինչ կընեն, պղտիկները ինչ կընան ընել :

Ուրեմն, ժողովուրդի զարգացմալ մասին աւագ պարտականութիւնն է բաջալերել Վենետիկի եւ Վիեննայի մեղուանջան միաբանութիւնները, գէթ անոնց հրատարակած հանդէսներն ու երկերը գնելով, երկեր՝ որոնք անգին գոհարներ ու մորգալիտներ են :

— Ամսոյս 11ին երկուշաբթի գիշեր ժամը 3ին (ը. թ) Կ. Պոլսոյ Թահթա գալէ կոչուած Թաղը Թուրքի մը քարուկիր սրճարանը յանկարծ փլելով հոն գտնուող 30 յաճախորդներէն 6ը մեռեր ու 18ն ալ վիրաւորուեցին :



ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Աղաւանդագարդ կամ մարգարա-
գարդ ակռայներ: — Ամերիկայի մէջ լրագ-
րական թղթակից մը հետեւեալ խօսակցու-
թիւնը ունեցած է հռչակաւոր ատամագործի
մը հետ: Թղթակիցը կրտսէ.

— Չեմ գիտեր թէ՛ ի՞նչ է վերջին նո-
րութեան փնտն. եթէ գիտէք՝ կաղաչեմ,
ինձ ալ հաղորդեցէք:

— Ո՛հ, պարո՛ն, Ամերիկայի կանայք
այլ եւս չուարած՝ չեն գիտեր ի՞նչ ընելին.
զանազան յիմարութեանց մէջ կը գտնուին՝
եւ իրենց այդ վարմանց փնտններն ալ կը կը-
րեն. ահաւասիկ մօտերս գերասանուհի մը
մեծ փնտսի պատահած է, որ կրնայ աղդու
խրատ մ'ըլլալ անոնց, որ իրենց ակռանե-
րուն վրայ ադամանդ ու մարգարիտ զետեղե-
լու նորութեան հետամուտ կը գտնուին. սա-
կայն ցաւալի է որ՝ տակաւին չեն խրատուիր,
չեն գգաստանար

— Ի՞նչ է պատահած դէպքը.

— Կը ճանչնաք օրիորդ Էմմա դերա-
սանուհին, այնպէս չէ՞.

— Այո՛, ամէն ժամանակ կը տեսակ-
ցիմ.

— Ուրեմն ի՞նչպէս եղեր է թէ՛ ձեզ
չէ պատմեր զիսէն անցածը.

— Եւ ո՛չ մէկ կին չուզէր հաղորդել
իւր գեղեցկութեան փնտսակար դէպք մը.

— Ուրեմն օրիորդ Էմմա այդ պատճա-
ռաւ ծածկած է եղածն: Օրիորդը ակռանե-
րուն վրայ բանի մը ադամանդ զետեղել տուած
էր, որ ներքեւի ոսկիներով 200 լիւրայէ աւել-
ի կարծէին: Կարծեմ՝ թէ՛ այդ ադամանդ-
ներն ձեր ուշադրութիւնն ալ գրաւած են:
Մօտերս գիշեր մը օրիորդը թատրոնէն տուն
կը վերադառնայ. հանուիլ ու անկողին մտնե-
լէն քիչ մը ետքը սենեկին դուռը կը բացուի,
ներս կը մտնեն երկու գող, եւ սենեկին մէջ
գտնուած բոլոր ծանրագին բաներն կողոպ-

տելէ հտըր՝ գեղեցիկ գերասանուհւոյն բով
կերթան: Գողերուն մէկը կըսէ անոր.

— Օրիորդ, կը հաճի՞ք բանալ ձեր
բերանը.

— Ի՞նչ պիտի ընէք. ի՞նչ կայ բերնիս
մէջ.

— Մեղ համար ամենամեծ գանձը կայ.

— (Աւստով) Կաղաչեմ, զիս անհան-
գիստ մի՛ ընէք.

— Ո՛հ, օրիորդ, դուք անհանգիստ մի՛
ըլլաք. միայն ձեր բերանը բանալու ձանձ-
րութիւնը շնորհ ըրէք:

— Ա՛խք բոլոր հարստութիւնս, ժող-
ուեցիք ամէն ի՞նչ որ կար սենեկիս մէջ, ինձ
թողէք բերնիս մէջի հարստութիւնս ալ:

Օրիորդն այսպէս շատ աղերսներ կընէ,
կաղաչէ, կը պաղատի, բայց դողերը բնաւ
կարեօրութիւն չեն տար: Գողերուն մէկը օ-
րիորդին գլուխը կը բռնէ, երկու մատնե-
րովն կը բանայ անոր նուրբ ու փափուկ շըր-
թունքը. լսելի չեն ըլլար գեղանի օրիորդին
ճիչերն ու աղաղակները. գողը կը զատէ ծը-
նօտին ոսկորները, իսկ միւսն ձեռքի աքցանովը
վայրագաբար կը բակէ ադամանդադարդ ակ-
ռաները: Հասկցա՞ք պարոն թղթակից:

— Արդարեւ սոսկալի դէպք մը. սակայն
դուք ի՞նչպէս իմացաք զայս.

— Հետեւեալ օրը, օրիորդ Էմմա զիս
կոչելով՝ դէպքը արտասուօք պատմելէ հտըր,
ըսաւ թէ հարկադրեալ է արուեստական ակ-
ռաներ դնել գողերուն քակած հանած ակ-
ռաներուն տեղ: Ամերիկայի կանայք տակաւին
շատ փորձանքներու պիտի պատահին իրենց
յիմարութեանց պատճառաւ:

Բարակ ու գեղեցիկ ձայնը ո՛ր կը
զգնուի: — Բնագէտ մը փորձով հաստատեր
է թէ՛ ա՛յն տեղերն, ուր ձկնկերութիւն կայ,
կանայք ընդհանրապէս բարակ ու գեղեցիկ
ձայն կունենան, ինչպէս կըսէ այդ բնագէտն
իւր մէկ երկասիրութեան մէջ, Իտալիոյ ծո-
վեզերեայ քաղաքաց բազմաց մէջ ամենագե-

ղեցիկ ձայն ունեցող կանայք կը գտնուին . նոյնպէս՝ Իրլանտայի եղերաբնակ անգղիացի կանայք : Զէնովաի ու Նաբոլիի մէջ են գեղեցկացայն երգչուհիք : Բայց, կը յաւելու, պէտք է որ շափաւոր ըլլայ ձկնկերութիւնը, ապա թէ ոչ՝ ձայնի գեղեցկութիւն ու փափկութիւնն անկարելի կըլլայ, ինչպէս Նորվեկիոյ եղերաց բնակչած մէջ գեղեցիկ ու բարակ ձայն ունեցողներն շատ սակաւագիւտ են, որովհետեւ ընդհանրապէս չափազանց մոլի են ձկնկերութեան :

Ուրիշէն յազիր մտաւոր մտք եղանակ մը:— Մօտերս Նիւ Եօրքէ ճամբայ ելած շոգնաւու մը մէջ, ամերիկացի մը տեսնելով դէմը նստող ուղևոր մը, որ ակնոցը քիթը լրագիր կը կարդայ, կըսէ անոր .

— Պարոն, կը հաճի՞ք ինձ տալ ակնոցնիդ, քիչ մը ժամանակի համար . իմ ակնոցըս դիպուածով ձգեցի և կոտրեցաւ . հիմա չեմ կրնալ տեսնել և ո՛չ մէկ կողմ :

— (Ուղևորը՝ ակնոցը հանելով) Ամենայն հաճութեամբ, պարոն, առէ՛ք, կը պատասխանէ :

Ամերիկացին՝ փափկութեամբ ու շնորհակալութեամբ ակնոցը կառնէ և քիթին վրայ տեղաւորելէ ետքը, կը յարէ .

— Կարծեմ թէ՝ առանց ակնոցի չէք կրնար լրագիր կարդալ :

— Այո, պարոն, եթէ ակնոցս չըլլայ՝ բնաւ չեմ կրնար տեսնել :

— Ուրեմն չպիտի կրնաք կարդալ այդ լրագիրն . այնպէս չէ՞ :

— Այո, մինչև որ ակնոցս ինձ վերադարձնէք՝ պարապ պիտի մնամ :

— Եւ որովհետեւ չպիտի կրնաք կարդալ լրագիրն, ուրեմն ինձ տուէ՛ք զայն, որպէս զի աչքէ անցունեմ, քանի որ ակնոցնիդ իմ վրաս է : —

Ակնոցին ու լրագրին տիրոջ բերանը բաց կը մնայ :

ՊՕԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ՈՍԿԵՐԻՉԸ

Սամաթիա կը ծնի :

Շահասէր, շատախօս, շատակեր :

Կամ կաթուածէ կը մեռնի և կամ ըստամոքսի խանգարումէ :

Իր կեանքին էն երջանիկ օրերը «Մեռելոց» երկուշաբթիներն են, Հինքեար Սուլի և կամ Ճըրճըր կերթայ և աշխարհք իրենն է :

Ոսկերչին կինը անպատճառ գէր պէտք է ըլլայ :

Շաբաթ իրիկուն կածիլուի և կիրակի առաւոտ ժամ կերթայ . անխուսափելի է այս :

Պահու սև լէտէնկօթ մը ունի չուխայէ զոր լուսահոգի Եմէնիճեան շինած է : Կերպաս մ'է որ չի հինար և ձեւաւոր մը որուն մօտան չանցնիր :

Տարին 6 անգամ կը հագնի, Ծնունդին, Զատիկին, Աստուածածնին, քենիին ամուսնութեանը, Հոգեգալստեան և վեցերորդ անգամ հագնելու համար կը սպասէ որ իր շուկայի դրացիներէն մէկը մեռնի :

Քաղաքականութեամբ կղբալի ինչպէս կղբաղի ոստրէ մը . . . շերամաբուծութեամբ : Իրենց մէջ ֆրանսերէն գիտցողը հերցուածող մըն է :

Ամբողջ իտէալն է որդին բժիշկ ընել և աղջիկը՝ գաշնակահար :

Մանկները, կազէլները նախ ինք կը սովորի և հայհոյանքներուն էն ազնիւները ինք կը սորվեցնէ :

Ճիտը կարճ կըլլայ, փորը մեծ և բանութալուն անպատճառ կարճ . ի հարկին տիրացութիւն ալ կրնայ ընել :

Ազգասէր է . . . ալաթուրբա ժամը 12էն ետքը .

Ոսկերիչը կրնայ հաւատքը փոխել բայց գուլպաներուն գոյնը երբէք, որոնք կը շարունակեն ճերմակ մնալ :

Պտղտիկ խանութի մը մէջ կապրի եւ ամենէն լայն սիրտը ունի :

Պատկած օձիք կը դնէ և միշտ սև քրտաված:

Յաճախորդ կիներու հետ պերճախօս է, իսկ երբ քնկերութեան մը մէջ գտնուի, միայն կոշիկներուն նեղութեանը վրայ կը խօսի:

Գուժ-բարու թրէնէն կիջնայ և ոտքով կեղէ շուկան, 20 փարս շահելու համար, բայց օրը 28 դրուշի մէջէ կուտէ:

Գործի մէջ չի խաբուիր, բայց ընտանեկան յարկին մէջ՝ կը տարակուսի:

Օրուան Պատրիարքին և կամ գոնէ Փոխանորդին հետ ազգականութիւն ունի:

Տեսակ մը *esprit* ունի որ շուկային կամարներէն դուրս այնքան կարծէ որքան Բաբային Փրանքը Բարիգի հրապարակին վրայ:

Կնոջը հետ դուրս ելած ատենը անպատճառ առջեւէն կը բալէ:

Իրիկունը երբ տուն կիրթայ, չանթայ մը ունի ձեռքը, ինչպէս Խաթիմիէյէն ելող էֆէնտին լրագիրներու տրցակ մը:

Մեծ խնամք կը տանի ճերմակեղէններուն, շապկը միշտ մաքուր է, ինչպէս նաև թաշկինակը, որուն պաշտօնը մատներուն կը յանձնէ:

Օղէն կառնէ և օղիին կուտայ:

Թաղական ըլլալէ զատ ուրիշ փափագ չունի աշխարհիս վրայ:

Չորս հազար ոսկի շահելուն պէս գործէ կը բաշուի և կնկանը կուօն Քիւսան մը կը շինէ:

Փարս

ՌԱՏԱՄԷՍ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

«Իրաւունք» ի խմբագրատունը՝ Մուսալլաի մեծ պոլիտային մէջ գտնուած անմեռել դերեզմանատան մը (բարակոփին) պարագան փոխադրուեցաւ:

Հայելիի խմբագրատունն ալ ելլալով թապեասիին մէջ, ի շինութենէ անտի վարձակալի երես չի տեսնող սըրճարանին նկուղը (քաթօյ) փոխադրուեցաւ:

Իսկ ամիրալին խմբագրատունը՝ ըստ առաջնայն 4 հոգիէն աւելի չառնող նեղ գամատային մէջ թողուլ որդուեցաւ, մինչև ցնոր տնօրէնութիւն:

(Ասոնցմէ՝ գիւրաւ կրնայ հասկցուիլ Պուլկարահայ մահուի պիւտճէին ունեցած նախանձելի վիճակը:)

Անցեալ կիրակի օրը տեղւոյս նաւամատոյցէն ինքզինքը ծովը նետեր է 40նոց գեր յայն կին մը, որ զուկին տարիքը ունեցող 20ամեայ երիտասարդի մը սիրահարած ու մերժուած է եղեր: Անմիջապէս չորս կողմէն հասնելով դուրս կը հանեն զինքը, որ հալած շրջադէստին շնորհիւ թթումի պէս ծովուն երեւր մնացեր ու նալ ընելով չուշեր եղեր տեղէն երերալ, «աղաբիւռ իսթէնում» ըսելով: Իմացուցեր են իրեն որ, եթէ ուրիշ անգամ այդ բանը կրկնէ, զինքը ազատող մը չ' գտնուելով, ձկնապետ (պաղոգ հմիմի) պ. տի ըլլայ:

Պալոյ մէջ գտնուած մէկ քանի ճամիներէն Բամաղանի գիշերները վառելիք ձիթախլը ըստ սովորութեան այս տարի ալ պաշտօնէից ձեռքով կը գողցուին կոր եղեր, անշուշտ իջքար սաշաքաւներուն վրայ անցունելու համար:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

(Մասնաւոր հեռագիր Բոժոժիկի)

Արմատատուն

29 Յունվար ժամը 9.—Կացութիւնն իս մտահոգութիւն կը պատճառէ... խոհարարին ու հացագործ Գալուստին, որոնց շահուն պիտի դպչի, որովհետեւ երկու ժամէ 'ի վեր բան մը կը գառնայ կոր մեծ արմատախոյզին մտքին մէջ:

Ժամը 10.—Կերերանք կոր:

Ժամ 11.—Մալ մնաց:

Ժամ 12.—Բայցօն. արմատատունը գոցուեցաւ:

ԳՐԱԳԱՆՔ ԳՕՃԱ

ԿԻՒԼԻՒՆՃԼԻԻ ԳՕՄԷՏԻ ՊԻՐ ԲԷՐՏԷ

(Կէյնն Ախմէտոսան)

Ճիւ. — Օնտան սօնրա կէլիւ, հէմ
իբի էլի տօլուճո...

Էրբ. — Տէմէք պու կէլէն պէրա-
պէրինտէ եւմէք տէ կէթիւրիւր,

Ճիւ. — Մաշալլահ, հէմ կէօրսէն
նէլէր կէթիւրիւր, պաղը քէրրէ թալուգ,
պաղէն հինտ թալուգլարը, բաթիլէր,
ստաքօլլար, վէ զայրիհիւմ վէ զայրի-
հիւմ:

Էրբ. — Տահա՞, տահա՞,

Ճիւ. — Պաղը պաղը կիւզէլ ալ գո՞շ-
լարը, մէյլէլէր

Էրբ. — Աման, սէօյլէ, պու հէրիֆ
քիմ օլույօր.

Ճիւ. — Քիմ օլաճագ, գասապ, էթ,
ղալղալաթ վէ սաիրէ կէթիւրիւր:

Էրբ. — Պէ ա՛ պուտալա, պէն սա-
նա գասապ վէ սիւտճի սօրմայօրըմ.

Ճիւ. — Օնլարտան պաշղա պուրա-
յա քիմ կէլէճէք.

Էրբ. — Պաշղա հիշ պիւր քիմսէ կէլ-
մէյօր, էօյլէ՞ մի.

Ճիւ. — Հա՛, պիւրիսի տահա վար,
միւսիւ, կէլիյօր, հէր կիւն, հէր սաաթ
պուրտա, պէլքի պէնիւլէ տէ կէօրիւշի-
յօր. ահմագ հէրիֆին պիւրի, հէր կիւն
օ կիւզէլ մատամլա գարշըպէ գարշը օ-
թուրուպ մուհապպէթլէ չաղըպ չաղըշ-
ալըմագ, (Լրօջէ հիսսէթիլնէն աշաղա-
րընք եհրէ վուրուր) եէյիպ, իշմէք կիւ-
լիպ օյնամագ, ահ, միւսիւ. չու ահ-
մագ մէնտէպուր հէրիֆէ օ գատար գը-
ղըյօրըմ քի՛ առէթա իֆրիթ քէսիլի-
յօրըմ.

Էրբ. — Չաբըգ սէօյլէ, սէօյլէտի-
ղին ահմագ պուտալա մէնտէպուր հէ-
րիֆ քիմ օլույօր.

Ճիւ. — Քիմ օլաճագ. իշթէ սիկ.

Էրբ. — Պէն մի, նէ՞ հալթ իտէ-
յօրսըն.

Ճիւ. — Էյ պուրտա սիկտէն պաշ-
ղա քիմ կէլէպիլիւր քի հիտաէթլէնի-
յօրսընը:

Էրբ. — Շիւտի չու քէմիքլէրինի
գըրարամ, օ վաղըթ ահնարսըն:

Ճիւ. — Եօգ, պա՛գ օնու եարամամ:

Էրբ. — (հէնսի) Օլմայաճագ, թաթ-
լը տալրանլալը, պէօյլէլիքլէ պէլքի պիւր
ուճ պուլապիլիւրիմ, (եխֆսեֆ) ճիւվաննի.

Ճիւ. — Միւսիւ.

Էրբ. — Պու նէ՞. բուպալարըն եհնէ
էսկիմիշ, նիշի՞ն պանա հապէր վէրմէ-
յօրսըն.

Ճիւ. — Պէլքի սիկ կէօրիւրսինիզ
տէյի՛ պէն սէսլէնմէյօրըմ. լաքին սիկ
տէ չօգտան պէրու հիշ ալտըրմայօրսը-
նը.

Էրբ. — Էկէր սէօյլիւմի տիննէր ի-
սէր, սանա պիւր գաթ էլպիսէ, կիւզէլ
պիւր չիզմէ, պիւր սաաթ-գօրտօն վէ եիւզ-
տէ ֆրանք վէրէճէիմ.

Ճիւ. — Աման տէմէ՛, պաշըմլա, գու-
լալմլա, էլլէրիմ վէ աշաղլարըմլա սի-
զի տիննէյօրըմ, հէմոն սէօյլէյին:

Էրբ. — Շու բէնչէրէյի կէօրիւեօր-
սըն ա՛. պուտա գաբու.

Ճիւ. — Էվլէթ, չու բէնչէրէ, չու-
տա մտտամըն օտա գաբըսը տըր.

Էրբ. — Թամամ, շիւտի չու մասա-
նըն իւզէրինէ չըգմալըսըն:

Ճիւ. — Օրատա նէ՞ եարաճարմ:

Էրբ. — Հանիեա՛ սէօյլիւմի տիննէ-
յէճէք իտին, ունութտոն մը, էլպիսէ
վէ.

Ճիւ. — Հա՛, հա՛, հաթըրմա կէլտի,
ազ գալսըն ունութաճագ տըմ. (մաաա-
նըն իւզէրինէ չըգաւր վէ տօղրու տօղրու)
պէօյլէ՞ մի իսթէյօրսընը.

(Տէվալի)

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Գ

Հանդիսարան 57րդ Տարի

Ճոխ և օգտաշատ պարունակութեամբ

Տարեկանն է 10 Փր. — 4 րուպլի.

2 ասլա:

Հասցե

Ռէսաֆսիօն քր յա ռէվի Պազնալեպ

Սէն Լազար

(Իթուրի)

Վէնիս

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ»

Ուսումնասիրք

Տարեկան 10 Փր. ոսկի, Վեցամսեայ 6 Փր.

կանխիկ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ—Գրական յօդուածներէն զատ՝ ճըշդիւ տեղեկութիւն կը տրուի հայ—գրականութեան, պատմութեան, ևայլն նկատմամբ ամէն ամիս ելած նոր հրատարակութեանց վրայ: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տըպուած կարեւոր լրերու վրայ:

«Ազգային լրագրաց բովանդակութիւնն», թղթակցութիւն, ծանուցում, ևայլն:

Խմբագրութեան զրկուած ամեն գրքերու վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն տալը պիտի շարունակուի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՆԻ

Հա ն դէ ս ի

Խիստ դիւրամատչելի գինով կը տպագրուին ամեն լեզուէ այցետումս, հասցէտումս, նամակագլուխ, պահարան, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ և պրօշիւռներ:

Բաղաքներէ եկած յանձնարարութիւնք ալ հշդութեամբ և փութով կը կատարուին:

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ



ՍՕՖԻԱ ԲԱՂԱԲԻ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխատրեայ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50.000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25.000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1898 Դեկտ. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" Փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16.000 "

Մէկ ութերորդ տոմսակին գինն է,

Ոսկի Լէվ Սթ.

Ա. ամսոյ համար 1 25

Բ. " " 1 75

Գ. " " 2 87 1/2

Դ. " " 3 62 1/2


Ե. " " 2 87 1/2

Զ. " " 2 2 1/2

14 40

Ասոնցմէ զատ կը գտնուին նաեւ քառորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնցարժէքները համեմատաբար կաւելնան:

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել սեղանաւոր Տ. Սարգիս Գաբրիէլեանի, Վառնա Մուսալլա:



ԳՈՒՇԱԿ

Ա. ՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ընթացիկ ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան:

ОТГОВОРНИКЪ М. СКОПОВЪ

Печатница "Взаимность", — Варна.